ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ 2
2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 4
3. ԱՄՓՈՓԱԳԻՐ 5
4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ 10
5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 14
6. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ 15
7. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ 16
8. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 17
9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 18

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի մայիսի 11-ի թիվ 130-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:
Հաշվեքննության առարկան	2021 թվականի երեք ամիսների պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «ՀՀ 2021թ պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշում,
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2021 թվականի հունվարի 1–ից մինչև 2021 թվականի մարտի 31–ը:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2021 թվականի մայիսի 19–ից մինչև 2021 թվականի հուլիսի 31-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի և Հաշվեքննիչ պալատի Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում ընթացակարգերը:
Հաշվեքննությունն իրականացրած	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի հինգերորդ վարչության կողմից, որի

կառուցվածքային ստորաբաժանում

աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Դ. Չիբուխչյանը :

2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՊԸՊ	Պայմանագրի ընդհանուր պայման
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ՊՀՊ	Պայմանագրի հատուկ պայման
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
հազ.	Հազար
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվության ընկերություն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
Կմ	Կիլոմետր

3. ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հաշվեքննության արդյունքներն արձանագրվել և ներկայացվել են հաշվեքննության օբյեկտի ղեկավարին ստորագրելու կամ գրավոր առարկություններ և բացատրություններ ներկայացնելու համար, սակայն օրենքով սահմանված 10 օրյա ժամկետում հաշվեքննության ղեկավարի կողմից որևէ գրավոր առարկություն կամ բացատրություն չի ներկայացվել:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում» ծրագիր

2017թվականին կազմակերպված միջազգային մրցույթի արդյունքում շինարարական աշխատանքներն իրականացնելու համար կնքվել են 3 պայմանագրեր՝ «Ա.Ա.Բ. ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ և «Բլաք ՍԻ Գրուփ» ՀՁ-ի հետ (պայմանագրի CW-ICB-M6/2016-2) գումարով 2,865,228.93 հազ. դրամ /նախահաշվային արժեքը 6,004,194.42հազ. դրամ/, «Սուարդի» ԲԸ հայաստանյան մասնաճյուղի հետ (պայմանագիր CW-ICB-M6/2016-3)՝ գումարով 4,719,096.24 հազ. դրամ /նախահաշվային արժեքը 5,549,888.21հազ. դրամ/ և «Հորիզոն-95» ՍՊ ու «Օբերոսլեր Կավ Պիետրոս» ընկերությունների հետ (պայմանագիր CW-ICB-M6/2016-1)՝ գումարով 4,876,787.38 հազ. դրամ /նախահաշվային արժեքը 6,577,153.29հազ. դրամ/:

Պայմանագրերը կնքվել են 2017 թվականի նոյեմբերի 30-ին, իսկ պայմանագրերով աշխատանքների կատարման ժամկետ են սահմանվել 900 օր: Կապալառուներին ծանուցման համաձայն աշխատանքների մեկնարկի սկիզբ է սահմանվել 2018 թվականի մայիսի 29-ը, կամ աշխատանքների ավարտը սահմանվել է 2020 թվականի նոյեմբերի 14-ը: Ծրագրի ինժեները LOT-2-ի համար պայմանագրով նախատեսված աշխատանքների ավարտի ժամկետից 93 օր հետո /15.02.2021թ./ և LOT-3-ի համար 110օր հետո /04.03.2021թ./ պատվիրատուին է ներկայացրել իր կարծիքը ժամկետի երկարաձգման անհրաժեշտությունը հաստատելու մասին սակայն առ 01.04.2021թվականը որևէ պայմանագրով աշխատանքների կատարման ժամկետի փոփոխություն չի կատարվել և որևէ պայմանագրի շրջանակում աշխատանքները չեն ավարտվել:

Ծրագրի սկզբից մինչև 31.03.2021թվականը ներառյալ ընկած ժամանակահատվածում ծրագրի շրջանակում կնքված պայմանագրերով նախատեսված 14,760,720.34 հազ. դրամի աշխատանքներից իրականացվել է ընդամենը 5,552,154.8 հազ. դրամի կառուցման և հիմնանորոգման աշխատանքներ, կամ **37,6 տոկոս** /«Ա.Ա.Բ.ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ 25,2 տոկոս, «Սուարդի» ԲԸ 36,9 տոկոս, «Հորիզոն-95» ՍՊԸ 47,2 տոկոս/**,** որի դիմաց վճարվել է

7,283,786,4 հազ. դրամ, առ 01.04.2021թ պատվիրված աշխատանքներից 9,208,565.54 հազ դրամի աշատանքները դեռևս չեն կատարվել:

Պայմանագրով նախատեսված աշխատանքները սահմանված ժամկետում չկատարելու համար Պայմանագրի Ընդհանուր Պայմանների 8.7 կետի համաձայն, Պատվիրատուն կապալառուների նկատմամբ պետք է հաշվարկեր վնասների փոխհատուցում՝ կատարման ժամկետից ուշացած յուրաքանչյուր օրվա համար, չկատարված աշխատանքի գումարի 0.1տոկոսի չափով (առավելագույնը պայմանագրի արժեքի 10 տոկոսի չափով), ինչը պատվիրատուի կողմից չի հաշվարկվել:

Կապալառուները Պայմանագրով նախատեսված աշխատանքներն ավարտելու ժամկետները երկարացնելու համար, պահանջի առիթ դարձած հանգամանքների վերաբերյալ ծանուցագրերը Ինժեներին պետք է ներկայացնեին հնարավորինս շուտ և ոչ ուշ, քան այդ հանգամանքների մասին տեղեկանալուց հետո 28 օրվա ընթացքում, սակայն կապալառուները ժամկետի երկարացման մասին ծանուցումները ինժեներին ներկայացրել են պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտից հետո, ոչ թե այդ ժամկետը լրանալուց առաջ: Արդյունքում, պայմանագրերի ավարտման ժամկետի երկարաձգման անհրաժեշտության հաստատման վերաբերյալ ինժեները իր կարծիքը պատվիրատուին ներկայացրել է LOT-2-ի համար պայմանագրով նախատեսված աշխատանքների ավարտի ժամկետից 93 օր հետո /15.02.2021թ./ և LOT-3-ի համար 110օր հետո /04.03.2021թ./, LOT-1-ի համար 2021թվականի առաջին եռամսյակի ընթացքում ինժեների կողմից պատվիրատուին կարծիք չի ներկայացվել: :

«Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստան–Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագրի համակարգում և կառավարում»/այսուհետ ծրագիր/

Ծրագրի շրջանակում խորհրդատվական ծառայությունների՝ «Նախագծի վերանայում և տեխնիկական վերահսկողություն» ծառայությունների մատուցման համար /նախահաշվային արժեքը 4,200,000 ԱՄՆ դոլար/, 03.04.2018 թվականին 42 ամիս ժամկետով, 4,038.6 հազ. ԱՄՆ դոլար արժեքով /այդ թվում՝ ԱԱՀ/ պայմանագիր է կնքել «Սաֆեջ» Բաժնետիրական ընկերության հետ:

2021թվականի առաջին եռամսյակի ընթացքում ըստ նախարարության կողմից տրամադրած տեղեկատվության «Սաֆեջ» Բաժնետիրական ընկերության կողմից մատուցվել է 195,763.0 ԱՄՆ դոլորի խորհրդատվական ծառայություններ, որի դիմաց կատարվել է 195,763.0 ԱՄՆ դոլարի վճարում:

Խորհրդատվական ծառայությունների մատուցման թիվ ADB/M-6/CS/QCBS/02- պայմանագրի «Սոցիալական անվտանգության աջակցություն» ծառայությունների մատուցման համար /նախահաշվային արժեքը 166,704.0 հազ. դրամ/ 13.09.2017 թվականին 198,294.9 հազ. դրամ արժեքով պայմանագիր է կնքել «ԱԼՏԱ-ՎԻՊ» ՍՊԸ-ի հետ, որի պայմանագրի ավարտի ժամկետը երկարաձգվել է մինչև 2021 թվականի մայիսի 31-ը:

Պայմանագրի կնքման պահից մինչև 01.01.2021 թվականը մատուցվել և դրա դիմաց վճարվել է 150,373.7 հազ. դրամ: Ընկերության կողմից 2021թվականի առաջին եռամսյակում ծառայություններ չի մատուցել և գումար չի վճարվել:

Աուդիտի ծառայությունների մատուցման համար /նախահաշվային արժեքը 47,831.0հազ. դրամ/ 19.06.2019 թվականին «ԲԻԴԻՕ Արմենիա» ՓԲԸ-ի հետ կնքվել է թիվ ADB/M-6/CS/LGS/01 պայմանագիրը՝ 13,496.7 հազ. դրամ արժեքով, պայմանագրի ավարտ սահմանելով 15.12.2021 թվականը: 2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ընկերության կողմից ծառայություններ չի մատուցվել և ընկերությանը գումար չի վճարվել:

«Նախագծային փոփոխությունների և արդիականացման խորհրդատվական ծառայությունների» մատուցման համար 08.12.2019թվականին ''Արցախճան''ՍՊԸ-ի հետ կնքվել է թիվ ADB/M6/GS/SSS/01 պայմանագիրը 56,973.2 հազ. դրամ արժեքով /նախահաշվային արժեքը 57,397.2 հազ. դրամ/ փոփոխության արդյունքում պայմանագրի ժամկետը երկարաձգվել է մինչև 12.09.2021թվականը, իսկ պայմանագրի արժեքը ավելացել է 54,495.32հազ. դրամով և սահմանվել 111,468.77 հազ.դրամ:

2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ըստ ներկայացրած տեղեկատվության մատուցվել է 8,076.39հազ. դրամի ծառայություններ, սակայն նախարարության կողմից ներկայացրած ''Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի'' հաշվետվությունում, որպես փաստացի կատարված ծախս նշել է 6,730.33 հազ. դրամ:

Արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվությունների համաձայն 2021 թվականի առաջին եռամսյակի ճշտված պլանով՝

- ✓ «Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ» ծրագրով նախատեսվել է իրականացնել 3477.6 կմ ընդհանուր երկարությամբ ավտոճանապարհների ձմեռային պահպանման աշխատանքներ, փաստացի սպասարկվել է 3288.7 կմ, իսկ մետաղական արգելափակոցների պահպանման և վնասված հատվածների վերականգնման աշխատանքների գծով

ընդհանուր երկարությունը ճշտված պլանով նախատեսվել է 720.6 կմ, փաստացի իրականացվել 764.3 կմ:

✓ «Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի շրջանակներում ճանապարհային շինարարություն» ծրագրով նախատեսվել է կատարել Բաբաջանյան-Աշտարակի խճուղի 9.4 կմ երկարությամբ և 24 մ միջին լայնությամբ նոր ճանապարհահատվածի կառուցման աշխատանքների նախատեսված 25%-ի 12%-ը, փաստացի աշխատանքներ չի կատարվել, իսկ Արգավանդ-Շիրակ 2.7 կմ երկարությամբ ճանապարհահատվածի /ներառյալ Հրազդան գետի վրա կամուրջի/ կառուցման աշխատանքների գծով նախատեսված 50%-ի 23 %-ը, փաստացի կատարվել է աշխատանքների 13%-ը:

✓ «Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայությունների գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացում» ծրագրով նախատեսվել է փոխադրել 4,512.00 հազար ուղևոր, որից արտոնություններից օգտվող 372.00 հազար ուղևոր, փաստացի փոխադրվել է 3,821.82 հազար ուղևոր, այդ թվում՝ արտոնություններից օգտվող 209.40 հազար ուղևոր:

✓ «Տարրական ընդհանուր հանրակրթություն» ծրագրով դասարանների սովորողների թիվը սահմանվել է 47,206 աշակերտ, կատարվող ծախսը 1,589,436.60 հազ. դրամ, փաստացի աշակերտների թվաքանակը կազմել է 47,930 աշակերտ, իսկ միջոցառման վրա կատարվող դրամարկղային ծախսը 1,464,485.30 հազ. դրամ: Ծրագրի շրջանակում Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող 153 հանրակրթական ուսումնական հաստատություններում մատուցվել է պարտադիր կրթության առաջին մակարդակում սովորողների ընդգրկվածության, գրագիտության և համակողմանի զարգացման բարձր մակարդակի ապահովման ծառայություններ:

✓ «Հիմնական ընդհանուր հանրակրթութուն» ծրագրովդասարանների սովորողների միջին տարեկան թիվը սահմանվել է 53274 աշակերտ, միջոցառման վրա կատարվող ծախսը 1,793,747.5 հազ. դրամ, փաստացի աշակերտների թվաքանակը կազմել է 55118, դրամարկղային ծախսը 1,793,497.5 հազ. դրամ, Սովորողների միջին գնահատականը գիտելիքների ստուգման արդյունքում տարեկան ճշտված պլանով և հաշվետու ժամանակահատվածում նախատեսվել է 13 բալ, փաստացի սովորողների միջին գնահատականը կազմել է 8 բալ: Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ-ում և Երևան քաղաքում գործում է գիտելիքների գնահատման 10 բալային համակարգ:

✓ ‘‘Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների’’ծրագրով նախատեսվել է

իրականացնել Գյումրի քաղաքի մեկ փողոցի (միջինը 9.5մ լայնությամբ և 16.75 կմ. երկարությամբ) հիմնանորոգում, փաստացի հիմնանորոգում չի իրականացվել, իսկ Գյումրի քաղաքի լուսավորության համակարգի գծով՝ 32 հատ հենասյունով լուսակետի հիմնանորոգում, փաստացի իրականացվել է 32 լուսակետ հենասյունի հիմնանորոգում:

✓ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների դրամաշնորհային ծրագրով (Տրանշ Ա,Բ) նախատեսվել է իրականացնել Գյումրի քաղաքի՝ մեկ փողոցի (միջինը 9.5մ լայնությամբ և 8.75 կմ. երկարությամբ) հիմնանորոգում, որը փաստացի հիմնանորոգվել է, հարակից մայթերով (միջինում 4մ լայնությամբ) մեկ փողոցի հիմնանորոգում, փաստացի հիմնանորոգում չի իրականացվել, մեկ փողոցի անձրևաջրերի հեռացման համակարգի հիմնանորոգում (գծ/գմ), որը փաստացի իրականացվել է և 219 փողոցների լուսավորության համակարգի արդիականացում ավտոմատ կառավարման համակարգով՛ 500հատ լուսակետի հիմնանորոգում, փաստացի իրականացվել է 250 հիմնանորոգում:

✓ «Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ծառայություններ» ծրագրով նախատեսվել է ապահովվել Երևան քաղաքի արտաքին լուսավորությամբ ապահովված 1691,3 կմ երկարությամբ փողոցներ, փաստացի ապահովվել է 1691,3 կմ, իսկ արտաքին լուսավորությամբ ապահովված 2628 հատ օբյեկտի դիմաց փաստացի ապահովվել է 2665 հատ օբյեկտների լուսավորություն:

✓ «Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KFW) աջակցությամբ իրականացվող Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայանների դրամաշնորհային ծրագրի» շրջանակներում իրականացվող ներդրումներ ծրագրի համար ենթադրամաշնորհներ չի տրամադրվել:

✓ «Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագրի շրջանակներում ՀՀ դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումներ» ծրագրով նախատեսվել է իրականացնել 1,120,275.00 հազար դրամի աշխատանքներ, փաստացի իրականացվել է 891,111.50 հազար դրամի աշխատանքներ:

4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Աղյուսակ 1

հազ. դրամ

Ծրագիր միջոցառում	Ծրագրերի և միջոցառումների անվանումները	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Հաշվետու ժամանակահատվածի պլան	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
1049-11001	Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ	10,895,900.6	10,870,700.6	983,476.5	958,276.5	932,763.4	932,763.4
1049-11007	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի /Մ6 Վանաձոր-Բագրատաշեն/ բարելավման ծրագրի համակարգում և կառավարում	2,250,416.3	2,219,916.3	395,794.4	390,294.4	111,659.5	113,126.6
1049-21004	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի ծրագրի կառուցում և հիմնանորոգում	1,393,587.1	1,393,587.1	460,000.0	460,000.0	109,812.8	302,701.7
1146-11001	Տարրական ընդհանուր հանրակրթություն	7,947,183.2	7,947,183,2	1,589,436,6	1,589,436.6	1,464,485,3	2,196,325.1
1146-11002	Հիմնական ընդհանուր հանրակրթություն	8,968,737.7	8,968,737.7	1,793,747.5	1,793,747.5	1,793,497.5	2,660,355.1
1157-12002	Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ծառայություններ	2,229,951.6	729,951.6	445,990.0	445,990.0	445,989.9	445,989.9

Ծրագիր միջոցառում	Ծրագրերի և միջոցառումների անվանումները	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Հաշվետու ժամանակահատվածի պլան	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
1157-12008	Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայությունների գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացում	2,862,392.6	2,862,392.6	500,423.0	500,423.0	500,423.0	500,423.0
1157-12017	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագիր	2,033,101.8	1,033,101.8	508,275.4	508,275.4	637,734,1	637,734,1
1157-12018	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների դրամաշնորհային ծրագիր (Տրանշ Ա, Բ,Գ)	2,957,130.1	1,957,130.1	739,282.8	739,282.8	172,085.6	172,085.6
1157-12021	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի շրջանակներում ճանապարհային շինարարություն	5,239,167.8	2,239,167.8	2,880,000.0	1,380,000.0	600,958.1	1,786,187.9
1189-12001	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագրի շրջանակներում ՀՀ դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումներ	4,745,313.0	4,007,912.0	1,481,656.0	1,120,275.0	891,111,5	891,111.5

Ծրագիր միջոցառում	Ծրագրերի և միջոցառումների անվանումները	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Հաշվետու ժամանակահատվածի պլան	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
1167-32006	Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KFW) աջակցությամբ իրականացվող Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայանների դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացվող ներդրումներ	1,207,003.9	1,207,003.9				
	Ընդամենը	52,729,885.7	45,436,784.7	11,778,082.2	9,886,001.2	7,660,520.7	10,638,803.9

5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում ձեռք ենք բերվել բավարար տեղեկատվություն հաշվեքննության իրականացման համար: Հաշվեքննության համար սահմանված ժամկետում չի տրամադրվել ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից 01.06.2021թվականի թիվ ՀՊԵ ԺՄ-131 և 01.07.2021թվականի թիվ ՀՊԵ ԺՄ-147գրություններով նախարարությունից պահանջված տեղեկատվությունը՝ «Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ», «Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի շրջանակներում ճանապարհային շինարարություն», «Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ծառայություններ» «Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայությունների գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացում», «Տարրական և Հիմնական ընդհանուր հանրակրթություն», Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագրերին առնչվող տեղեկատվությունը: Հաշվեքննությունը իրականացվել է մեզ հասու տեղեկատվության հիման վրա:

Առկա տեղեկատվության հիման վրա իրականացված հաշվեքննությամբ՝

- Հաշվեքննության ընթացքում էական խեղաթյուրումներ չի հայտնաբերվել:
- Հայտնաբերված խեղաթյուրումները համատարած չեն:

6. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

6.1 (1049-21004) Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում» ծրագիր

6.1.1 Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի Ընդհանուր Պայմանների 8.7 կետի պահանջների հետ:

Ծրագրի շրջանակում 2017 թվականին կնքված թվով 3 պայմանագրերով աշխատանքների կատարման ժամկետ են սահմանվել 900 օր՝ 2020 թվականի նոյեմբերի 14-ը: Առ 01.04.2021թվականը որևէ պայմանագրով աշխատանքների կատարման ժամկետի փոփոխություն չի կատարվել սակայն որևէ պայմանագրի շրջանակում աշխատանքները չեն ավարտվել:

Պատվիրված աշխատանքներից 9,208,565.54 հազ դրամի աշխատանքները առ 01.04.2021թվականը դեռևս չեն կատարվել:

Պայմանագրով նախատեսված աշխատանքները սահմանված ժամկետում չկատարելու համար պատվիրատուն պայմանագրի ընդհանուր պայմանների (ՊԸՊ) 8.7 կետի համաձայն, կապալառուների նկատմամբ պետք է հաշվարկեր վնասների փոխհատուցում, աշխատանքների կատարման ժամկետից ուշացած յուրաքանչյուր օրվա համար, չկատարված աշխատանքների գումարի 0.1տոկոսի չափով (առավելագույնը պայմանագրի արժեքի 10 տոկոսի չափով), ինչը պատվիրատուի կողմից չի հաշվարկվել:

6.1.2 Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի Ընդհանուր Պայմանների 20,1 կետի պահանջների հետ:

Կապալառուները Պայմանագրով նախատեսված աշխատանքներն ավարտելու ժամկետները երկարացնելու համար, պահանջի առիթ դարձած հանգամանքների վերաբերյալ ծանուցագրերը Ինժեներին պետք է ներկայացնեին հնարավորինս շուտ և ոչ ուշ, քան այդ հանգամանքների մասին տեղեկանալուց հետո 28 օրվա ընթացքում, սակայն կապալառուները ժամկետի երկարացման մասին ծանուցումները ինժեներին ներկայացրել են պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտից հետո, ոչ թե այդ ժամկետը լրանալուց առաջ: Արդյունքում, պայմանագրերի ավարտման ժամկետի երկարաձգման անհրաժեշտության հաստատման վերաբերյալ ինժեները իր կարծիքը պատվիրատուին ներկայացրել է LOT-2-ի համար պայմանագրով նախատեսված աշխատանքների ավարտի

ժամկետից 93 օր հետո /15.02.2021թ./ և LOT-3-ի համար 110օր հետո /04.03.2021թ./, LOT-1-ի համար 2021թվականի առաջին եռամսյակի ընթացքում ինժեների կողմից պատվիրատուին կարծիք չի ներկայացվել: :

7. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

7.1.1 (1049-11007 «Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստան–Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագրի համակարգում և կառավարում»/այսուհետ ծրագիր/

«Նախագծային փոփոխությունների և արդիականացման խորհրդատվական ծառայությունների» մատուցման համար 08.12.2019թվականին ''Արցախճան''ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրով նախատեսված ծառայությունների գծով 2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ըստ ներկայացրած տեղեկատվության մատուցվել է 8,076.39հազ. դրամի ծառայություններ, սակայն նախարարության կողմից ներկայացրած «Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի» հաշվետվությունում, որպես փաստացի կատարված ծախս նշել է 6,730.33 հազ. դրամ, կամ 2021թվականի առաջին եռամսյակի փաստացի ծախսը պակաս է ցույց տրվել 1,641.5 հազ, դրամով:

7.2 (1146-11002) Հիմնական ընդհանուր հանրակրթություն

7.2.1 Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ հավելվածի համաձայն սովորողների միջին գնահատականը գիտելիքների ստուգման արդյունքում տարեկան ճշտված պլանով նախատեսվել է 13 բալ, փաստացի սովորողների միջին գնահատականը կազմել է 8 բալ: Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ-ում և Երևան քաղաքում գործում է գիտելիքների գնահատման 10 բալային համակարգ:

8. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հաշվեքննության առարկայի գծով նախորդ ընթացիկ եզրակացություններում Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերացման, կատարված առաջարկությունների ընդունման կամ չընդունման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն հաշվեքննվող օբյեկտի կողմից չի տրամադրվել:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը

Հաշվարկել պայմանագրերով նախատեսված աշխատանքները սահմանված ժամկետում չկատարելու համար պայմանագրի ընդհանուր պայմանների (ՊԸՊ) 8.7 կետով սահմանված, աշխատանքների կատարման ժամկետից ուշացած յուրաքանչյուր օրվա համար, չկատարված աշխատանքների գումարի 0.1տոկոսի չափով տույժերը:

Դավիթ Չիբուխչյան
ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ
26 հուլիսի 2021 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,
Բաղրամյան փող. 19, ք. Երևան,
Հայաստանի Հանրապետություն